

ՍԻՍՆԴՈՒԹԻՒՆ

Կարծր, ուղղածիզ ժալուխ ստորև
Կանգնած և լուռ, դէմքով տխուր
Հայոց արքան Տրդատ Պարթև,
Ձեռքին մի մուրճ ամրակուռ:

Եւ դարկում է ուժեղ թախույ:
Առջևն ընկած մեծ սալին,
Տաշում և լուռ նա եռանդով
Նոր ձև տալիս պինդ քարին:

Եւ կտորտանքն փշուր փշուր,
Յատկում՝ չորս կողմ դարագին,
Եւ խուլ թնդիւն, աղմուկն անլուռ
Ցնցում՝ անտառն, ձորն ուժգին:

Սարսափահար մութ ալրերից,
Մռընչալով դաղաններ
Փախչում են դուրս մեծ երկիւղից,
Ճանդառեւելով լեռ քարեր:

Եւ բաղէներ արագաթև,
Խումբ անդգներ գիշակեր,
Սև ծիծառներ թևով թեթև,
Երամ երկչոտ տատրակներ:

Խառն, ահարեկ իրար անցած,
Ճեղքում են օդն ալտալն կողմ,
Ճչում, սուլում, կարծես կատաղած,
Արագ սլանում ինչպէս ճողմ:

Տաշում է քարն հզօր արքան,
Տաշում լուխ, դլխիկոր,
Եւ տաք քրտինք ճակտի վերան
Հոսում, թափւում ծոր ի ծոր:

Կոկում քարը, նոր ձև ստանում,
Հղկում՝ երեսն ու կողքեր,
Եւ մեծ Արքան ուշիմ բանում,
Որ շուտ քաւի իր մեղքեր:

Նա իր սպանած անմեղ կոյսին

Տապանաքար է տաշում,
Տխուր մտքով, արցունքն աչքին
Չքնաղ սլաակներն է լիշում:

Քարը պատրաստ չալակն առած,
Մասից դեպ դաշտ է իջնում,
Բալց ծանր է բեռն, ծնկներն հոգնած
Արագ առաջ չեն շարժում:

Տատանում է հզոր Արքան,
Մտքում այն ժամն անիծում,
Երբ միտք արաւ կոխին տապան
կտրել անձամբ սարերում:

Թիկնում է լուռ ցցուած ժալոխն
Փոքր ինչ հանդիստ առնելու,
Եւ իբր ամօթ՝ հզոր փառքին
վճում բեռն թողնելու:

Հպարտ ու վեհ, լուռ հակացքով
Աչերն չորս կողմն է դարձնում,
Ուժգին, շտապ մի շարժումով
Բեռից բաժնուել է փորձում:

Բալց չի պոկում քարը մէջքից,
Քարը ժալոխի պինդ կպած,
Անդոր, կատղած խիստ զարույթից
Մնում է արքան կաշկանդուած:

Եւ զղջում է իւկոյն Արքան,
կոխին մաղթանք առաքում,
Մինչ վերջ վճիռն արքայական
կատարելու խոստանում:

Աներևոյթ կապանքները
Քարը պոկում են ժալոխից.
Շտապեցնում է արքան քալերն,
Նոր ուժ ստացած աղօթքից:

Եւ մինչի վերջ հաւատարիմ
Նա իր խոստման մնալով՝
կանգնեցնում է կոխին շիրիմ
Մասսից քարեր կրելով:

Գ.Ա.ՍՊՕ.